ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1957 Общественные науки

Ա. Ցեր-Վանանդյան

ԴՎԻՆ ՔԱՂԱՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 9—10-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ը դարի վերջից Դվինը դադարեց արաբական խալիֆայության Արմինիա կուսակալության միակ կենտրոնը լինելուց։ 789 թ.[1] սկսած Արմենիա կուսակալության ոստիկանի հիմնական նստավայրն էր համարվում նաև Պարտավը (արաբ Բարգաա)։ Դվինն այդ օրվանից դարձավ երկրորդական նստավայր։ Թ դարի սկզբին, երբ խալիֆայության զանազան մասերի մեջ սկսեցին խլրտումներ, Արմինիա կուսակալությունը, նույնպես, անմասն չմնաց ընդհանուր շարժումից։ Ջահհաֆյան ամիրաները սկսեցին մի ուժեղ շարժում, որի նպատակներից մեկն էր նաև Դվինի գրավումը։ Բայց այդ շարժումը ձախողվեց ոստիկանների և հայ Բագրատունիների միացյալ ջանքերի շնորհիվ։

861 թ. սպանվեց Մութավաքքիլ խալիֆան և սկսվեց մի նոր շրջան, երբ Դվինը կովախնձոր դարձավ երկու ուժերի՝ հայ Բագրատունիների և զանազան մահմեդական ամիրաների միջև։

1. ԴՎԻՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԿԱՎԱՌ (862—894)

Երբ Մութավաքքիլն սպանվեց, միանգամից թուլացավ խալիֆայության Ուշումն ամբողջ Անդրկովկասում։ Դրանից հետո Բաղդատից ուղարկված ոստիկանները լոկ պաշտոնյաներ էին, որոնք հավաքված հարկերը փոխանցում էին խալիֆային։ Երևի այդ է պատճառը, որ այս շրջանի աննշան ոստիկանների ցուցակը միշտ էլ մնում է անկատար[2]։ 862 թ.[3] սկսած Հայաստանի, Քարթլիի և Առանի (Աղվանք) հարկերը[4] հավաքում էր իշխանից իշխան Աշոտ Բագրատունին։ Նույն այդ ժամանակ Շիրվանում ինքնագլուխ սկսեցին իշխել մազիադիները, իսկ Դերբենդում հաշիմիները[5]։

Այս շրջանում Դվինը դեռ մնում էր որպես վարչական կենտրոն, Պարտավի հետ միասին։ Թովմա Արծրունին հիշում է ոստիկան՝ Հալթի որդի Ահմաթի (Մուհամմեդ իբն Խալիդ)[6] գալուստը Դվին՝ հարկերը հավաքելու[7]։ Նա պատմում է, թե ինչպես Պարտավի և Մանազկերտի ամիրաները նոր ոստիկանի հետ դավեր են նյութում Աշոտ Բագրատունու դեմ։ Եթե այդ ժամանակ

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1951, էջ 150։

[2] Տես նորագույն ցուցակը՝ Հ. Նալբանդյան. Արաբացի ոստիկանները Հայաստանում, ԳԱ Տեղեկագիր, 1956, № 8։

[3] K. Mlaker, Zur Chronologie Asots I, Հանդէս Ամսօրեայ, 1927, նոյ.-դեկտ.։

[4] Կուդամա. Bibl. Geogr. Arab. ed. de Goeje, pars VI. էջ 246։

[5] Очерки по истории Азербайджана, Изв. АН АзССР, 1946, № 1.

[6] Հ. Նալբանդյան. Արաբացի ոստիկանները Հայաստանում, ԳԱ Տեղեկագիր, 1956։

[7] Թ. Արծրունի. Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 252—254։

Դվինում լիներ տեղական ամիրա, ինչպե՞ս կարող էր նա բոլորովին երևան չգալ մի այնպիսի ժամանակ, երբ նոր ոստիկանը հենց Դվին էր գալիս։

Աշոտ Ա-ի թե՛ իշխանության, թե՛ թագավորության շրջանում Դվինում դեռ գործում էր արաբական փողերանոցը։ Կան Արմինիա վերտառությամբ դրամներ այս շրջանների խալիֆաների անուններով[1]։

Թ դարի երկրորդ կեսից Դվինում սկսում է մի յուրահատուկ շրջան, որը շարունակվում է մինչև Շադդադյանների իշխանության վերջնական հաստատումը՝ ԺԱ դարի 20-ական թվականները։ Այս շրջանում Դվինը ներկայացնում է հայ-մահմեդական մի քաղաք, որի բնակչությունը խառն էր։ Իհարկե միշտ հայերն էին մեծամասնությունը[2], բայց օտար՝ մահմեդական տարրը մեծ դեր էր խաղում և հաճախ աղդում էր քաղաքի ճակատագրի վրա։ Աշոտ Ա-ը չձդտեց խորտակել օտար տարրի ուժը քաղաքում և այն իր մայրաքաղաքը դարձնել։ Ահա այստեղից է սկսում այն դժբախտ շրջանը, երբ Դվինը ոչ վերջնականապես մաս կազմեց հայոց թագավորության և ոչ էլ միանգամ ընդմիշտ նրանից կտրվեց։

Թ դարի 80-ական թվականներից մինչև ԺԱ դարի 20-ական թվականները Դվինը մոտավորապես 20 անգամ ձեռքից ձեռք անցավ։

869 թ. Աշոտ Բագրատունին հռչակվեց թագավոր Հայոց[3] իշխանների և եկեղեցու կողմից, բայց խալիֆայի կողմից հաստատվեց միայն 886 թ.։ Նույն ժամանակ նրան թագ ուղարկեց նաև Բյուզանդիայի կայսր Վասիլ Ա-ն։

Նոր թագավորը Դվինում չնստեց։ Չնայած այն բանին, որ Դվինը և Ոստան դավառը արդեն համարվում էին Բագրատունիների կալվածք[4], Աշոտ Ա-ը ինչ-ինչ պատճառներով չնստեց Դվինում և նստավայր ընտրեց իր բուն կալվածներում՝ Բագարանում։ Աշոտ Ա-ի այս քայլը չդիտենք ինչպես անվանել՝ ճակատագրական սխալ, թե ժամանակի պահանջ։ Մի բան պարզ է, որ սրա հետևանքով ուժեղացավ օտար տարրի աղդեցությունը Դվինում և առաջացան այն մեծ բարդությունները, որոնց երկար շարքը կազմում է Դվինի խառնաշփոթ պատմությունը Թ դարից մինչև իր կործանումը (ԺԴ դ.)։

Օտար ամիրաները, որոնք Հայաստանի դանադան մասերում հաստատվել էին, առիթ էին որոնում, որպեսզի որևէ մասում իշխանություն ձեռք բերեն։ Այսպիսի բախտախնդիրներից էին Հովհաննես կաթողիկոսի հիշատակած երկու եղբայրներ՝ Մահմետը և Ումային (Մուհամմադ և Ումայյա)։ Նրանց ծագումն անհայտ է։ Պատմագիրը նրանց անվանում է «դլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին»[5]։

Այս երկու եղբայրները Դվինում հաստատվել էին հավանաբար կամ Աշոտ Ա-ի իշխանության վերջին տարիներին, կամ Սմբատ Ա-ի իշխանության առաջին տարիներին, նրա և իր Աբաս հորեղբոր միջև տեղի ունեցած վեճի ժամանակ։ Նրանց և թագավորի միջև կար համաձայնություն՝ հնազանդության և ծառայության մասին։ Օդտագործելով այն առիթը, որ Ատրպատականի ոստիկան Աֆշինը սպառնալի դիրք էր բռնել Սմբատ Ա-ի նկատմամբ,

[1] *Б. Тизенгаузен*, Монеты Восточного Халифата, СПб, 1873, էջ 323—324։

[2] Ալ-Իսթախրի, Bibi. Geogr. Arab., pars I, էջ 188։

[3] *Б. Аракелян*, Гарни (I), Ереван, 1951, էջ 84—87։

[4] Opus Geographicum auctore *Ibn Haukal*, ed. J. H. Kramers, Lugd. Batav., 1939, v. II, էջ 343։

[5] Յովհաննէս կաթողիկոս, *Պատմութիւն, Երուսաղէմ, 1867*, էջ 202։

երկու եղբայրներն ապստամբվում են։ Սմբատը գալիս է և պաշարում քաղաքը։ Նրանք փորձում են փախչել, բայց բռնվում են և Սմբատի կողմից շղթայակապ ուղարկվում կայսեր։ Այս վերջին քայլն անհասկանալի է, որովհետև Դվինի ամիրաների ապստամբությունը ոչ մի առնչություն չուներ Կայսրության հետ և վերաբերում էր Հայոց թագավորության, որը պաշտոնապես դեռ կապված էր խալիֆայության հետ։

Խեղդելով Դվինի ապստամբությունը, Սմբատ Ա-ը հնարավորություն ունեցավ զսպելու ապստամբներին երկրի բոլոր մասերում, վերանվաճելով այն նահանգները, որոնք իր հոր ժամանակ ենթակա էին Բագրատունյաց իշխանության։ Հետաքրքրական է այն, որ նա այս բոլորը նվաճեց միայն Դվինին տիրելուց հետո։ Ահա այստեղ է երևում այն կարևոր դերը, որը կարող էր խաղալ Դվինը Հայոց թագավորության միասնականության պահպանման գործում։

893 թ. տեղի ունեցավ Դվինի երկրորդ մեծ երկրաշարժը, որի մասին խոսում են թե՛ հայ (Հովհաննես[1]), թե՛ արաբ (Իբն ալ Ասիր[2]) պատմագիրները։ Կործանվեցին ս. Գրիգոր Կաթուղիկե եկեղեցին, կաթողիկոսարանը և Յիզտբուղիտի վկայարանը[3]։

2. ԴՎԻՆԸ ՍԱՋՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ (894—929)

Ա—894—901 թթ.

889 թ. Աբուլ-Սաջ Դեղադի որդի Մուհամմադ Աֆշին նշանակվեց Ատրպատականի ոստիկան։ Նկատի ունենալով, որ Հայաստանն այլևս չէր կառավարվում ոստիկաններով, նրա հարկերի Բաղդատ փոխանցումը հանձնարարվեց Մուհամմադ Աֆշինին։ Այս վերջինս առիթ էր որոնում միջամտելու Հայաստանի ներքին գործերին։ Սմբատի դաշինքը Կայսրության հետ Աֆշինին առաջին առիթը տվեց միջամտելու, բայց հարցը վերջացավ խաղաղությամբ։ Ինչպես տեսանք, խեղդելով Դվինի ապստամբությունը Սմբատ Ա-ը երկու ապստամբ եղբայրներին շղթայակապ ուղարկեց Բյուզանդիայի կայսեր։ Դվինի ապստամբությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Սմբատ Ա-ը նոր էր վերադառնում Աֆշինի հետ Արաքսի հովտում հանդիպելուց և միայն Դվինի ապստամբությունը ճնշելուց հետո է, որ Աֆշինը հարձակվում է Հայոց վրա։ Հավանաբար որևէ կապ պետք է լիներ Դվինի ամիրաների և Աֆշինի միջև։ Չէ՞ որ նրանց հասարակաց թշնամին Հայոց թագավորն էր։

Ըստ Հովհաննես կաթողիկոսի, Աֆշինը չի կարողանում հանդուրժել Սմբատ Ա-ի հաջողությունները ապստամբ նախարարներին ճնշելու գործում և որոշում է հարձակվել[4]։ Նա մտնում է Արաքսի հովիտը և առանց դժվարության գլխավում Նախճավանը և Դվինը։ Այդ քաղաքների մահմեդական տարրը միշտ պատրաստ էր հանձնվելու Ատրպատականի ամիրաներին։

---

[1] Յովհաննէս, էջ 204։
[2] *Ibn al-Athir*, ed. C. J. Tornberg. 1871, v. VII, էջ 323։
[3] Յովհաննէս, էջ 204։
[4] Կ. Ղաֆադարյան. *Դվին քաղաքը և նրա պեղումները*, Երևան, 1952, էջ 109 և 119։ Յովհաննէս, էջ 210։

Այդ օրվանից սկսում է Դվինի պատմության մեջ մի նոր շրջան։ Դրանից հետո, մինչև Գագիկ Ա (990—1020) Գողթն — Նախճավան — Դվին հատվածը մնում է մահմեդական տիրապետության տակ և ոչ մի Բագրատունի թագավորի չի հաջողվում վերջնականապես նվաճել այն։ Մոտ հարյուր տարի տևող այս շրջանում, ոչ մի հաստատուն իշխանություն չգոյացավ Դվինում։ Անընդհատ իրար էին հաջորդում զանազան իշխանություններ։ Ընդհանուր բառով, մահմեդական իշխանությունը Դվինում անվանվում է ամիրայություն։ Բայց դա նման չէր մեզ ծանոթ այլ ամիրայություններին (օր. Մանազկերտի կամ Թիֆլիսի ամիրայությունները)։ Այստեղ, հենց քաղաքում, ժառանգաբար չէր իշխում ոչ մի իշխանական տուն։ Նա ինքնուրույն չէր, այլ պարզապես մի հենարան էր Ատրպատականի ամիրայությունների համար Հայաստանի ներքին գործերին միջամտելու։ Ուստի այդ հենարանի ոչնչացումը Հայոց թագավորության ապահովության առաջին պայմանն էր։

Մինչև իր մահը (901) Ապշինը հաճախ անձամբ լինում էր Դվինում և այնտեղից միջամտում Հայաստանի ներքին գործերին, օգտագործելով Վասպուրականում տեղի ունեցած խռովությունները։ Իր բացակայության ժամանակ, նա, հավանաբար, քաղաքում թողնում էր որևէ մեկին որպես կառավարիչ։ Վերջին անգամ Դվինից հեռանալուց նա թողեց իր որդուն՝ Դևդադին և մեծ ներքնապետին[1]։

Հենց որ լսում է իր հոր մահը, Դևդադը վերադառնում է Աստրախան։ Բայց նրա հորեղբայրը՝ Յուսուֆը նրանից խլում է իշխանությունը։

Բ.—901—919 թթ.

Այս շրջանում Յուսուֆը Դվինը դարձրեց իր բոլոր գործողությունների հենարանը։ Այստեղ է նա բանտարկում իր ձեռքն ընկած հայ իշխաններին, նույնիսկ Հովհաննես կաթողիկոսին։ Այստեղ բերեց նաև Սմբատ Ա-ին և խաչի վրա ցուցադրեց նրա դիակը։ Սմբատի պարտությամբ փշրվեց Աշոտ Ա-ի հիմնած թագավորությունը։ Սաջյաններին հաջողվեց այդ բանը իրագործել Արծրունիների կենտրոնախույս ձգտումների պայմաններում։ Աշոտ գահաժառանգը, որը դիմել էր Կայսրության օգնությանը, Արևմուտքից վերադարձին փախցնում է իշխանության ձգտող Աշոտ Շապուհյանին, որը հաստատվում է Դվինում։ Յուսուֆը վերջինիս տվել էր թագ։

Որպեսզի ավելի ապահով լինի Ատրպատականի կապը Դվինի հետ, Յուսուֆը թույլ է տալիս, որ հայկական Գողթն պավառում հաստատվի մի արաբ ամիրա[2]։ Այս ամիրայությունը շատ վատ դեր խաղաց Գողթն — Նախճավան — Դվին հատվածում օտար տարրի ամրացման գործում։ Անցյալում Նախճավանն Վասպուրականի մասն է կազմել, բայց ահա Սմբատ Ա-ն, ի հեճուկս Գագիկ Արծրունու, այս պավառը սպսլիս է Սյունյաց Սմբատին։ Սյունյաց ձեռքումն էլ նա երկար չմնաց։ Գողթնի բռնավորը խլեց նրանց ձեռքից նաև Երնջակ ամրոցը և հետզհետե տարածվեց դեպի Նախճավան։ Սաջյանների իշխանության ժամանակ Գողթնի ամիրան ենթակա էր Ատրպատականին և այսպիսով ստացվում է մի սեպ՝ Գողթ—Նախճավան—Դվին։ Այս սեպը, որը խրվել էր մինչև

[1] Ցովհաննես, էջ 234։
[2] Նույն տեղում, էջ 384։

Այրարատ, կարևորագույն խանգարիչ ազդակներից մեկը հանդիսացավ Հայոց միացյալ թագավորության պահպանման գործում։

Դ—919—922 թթ.

919 թ. Յուսուֆը, որն ապստամբվել էր խալիֆայի դեմ, գերի ընկավ։ Նրան հաջորդեց իշխանության մեջ Սրուք (Սուբուք) անվամբ մեկը Ատրպատականի մեծամեծներից։ Սա իրեն դեռ թույլ զգալով, լավ հարաբերություններ է հաստատում Աշոտ Բ-ի հետ խալիֆայի կողմից նրան տալով Շահանշահ տիտղոսը։ Սրդքը կարճ մնաց իշխանության մեջ, որովհետև, երբ 922 թ Յուսուֆը բանտից ազատվեց, Սբուքն արդեն մահացել էր[1]։

Իհարկե, Սբուքի այս բարեկամական քաղաքականությունը նպաստավոր չէր Աշոտ Շապուհյանին։ Ահա այդ ժամանակ է, որ Աշոտ Բ-ը հարձակվում է Դվինի վրա, որտեղ Նստում էր իր հակառակորդը։ Վերջապես Հովհաննես կաթողիկոսի միջնորդությամբ երկու Աշոտները իրար հետ հաշտվում են և միասին ընկճում քաղաքի օտար տարրի դիմադրությունը։ Հովհաննես կաթողիկոսը գրում է, որ «զմոլորութիւն պաշտօնէիցն հեթանոսաց յինքեանս գրաւեալ ընդ ձեռամբ նուաճէին»[2]։

Հայտնի չէ, թե ինչքան ժամանակ Աշոտ Շապուհյանը Դվինում մնաց։ Հավանաբար նա շուտով վերադարձավ իր կալվածները՝ Բագարան։

Այս շրջանում Բյուզանդիան արդեն ինչ ինչ պատճառներով արշավանք է կազմակերպում Դվինի դեմ։ Իհարկե Հայոց թագավորությունը օգնություն չէր խնդրել Կայսրությունից, բայց ակներևաբար վերջինս առիթը եկած համարելով դեպի Արևելք ծավալվել, ուզում էր, որ խալիֆայության դեմ ուղղված աշխատանքներից մի քանիսը երբեմն ուղղվեն նաև դեպի Հայաստան։ Կոստանդին Ծիրանածնի մոտ, այս բանը հստակ կերպով երևում է։

915 թ. օգնության փոխարեն Կայսրությունը նույնիսկ իրավունք էր վերապահում Բագրատունի թագավորներին իրեն ենթակա համարելու[3]։ Ծիրանածինն ասում է, որ Ռոմանոս Լեկապենոսի ժամանակ (919—944) Դվինի դեմ արշավանքի ուղարկված Հովհան Կուրկուասն իր ճանապարհին անապատացրեց ամբողջ Բասենը որպես արաբներին ենթակա շրջան։

Դվինի դեմ այս արշավանքի մասին խոսում է Ասողիկը «Սա (Ռոմանոսը) չերկրորդ ամի թագաւորութեանն իւրոյ գումարեաց զօրք բազում և դեմեսլիկոս ուռաքեաց ի Դուին քաղաք յորում էր Սպքի ամիրայ»[4]։ Աշոտ Բ-ը որպես Սբուքի դաշնակից, իհարկե կողմնակից չէր 922 թ. այս արշավանքին։ Հետաքրքրական է Հովհաննես կաթողիկոսի լռությունն այս հայտնի արշավանքի մասին։ Բայց նրա մոտ այնուամենայնիվ նկատվում է մի ակնարկություն, որը վերաբերում է հենց այս արշավանքին և խոսում է այն մասին, որ Աշոտ Բ-ից ապրստամբած իշխան Ամրամը գաղտնի կապեր ուներ Կուրկուասի հետ։ Հովհաննես կաթողիկոսի մոտ նրա մասին գրված է, որ «հաճէր հաւանէր մտանել ընդ

[1] *Ibn al-Athir*, v. VIII, էջ 101։

[2] Յովհաննէս, էջ 400։

[3] *Const. Porphyrogenitus*, de Ceremoniis. Bonnae, 1829, էջ 686—87։ Նույնի՝ О народах, Москва, 1899, էջ 164։

Rambaud, L'Empire grec au dixieme s., Paris, 1870, էջ 524—27։

[4] Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, Ս. Պ., 1885, էջ 170։

լծով ծառայութեան անրնիկն Գուրգենայ որ իշխան իշխանաց էր Գամրաց աշխարհին»[1]։ Անրնիկ Գուրգենը Հովհան Կուրկուասն է, իսկ Գամրաց աշխարհը Կապադովկիան է։ Եթե սա ճիշտ է, ուրեմն Կայսրությունն արդեն վտանգավոր դավեր էր լարում Հայոց թագավորության դեմ և նրա պարտությունը Դվինի առաջ փրկեց Աշոտ Բ-ին հետագա բարդություններից։

Դ—922—929 թթ.

Յուսուֆն ազատվեց բանտից և խալիֆը նրան դարձյալ շնորհեց Ատրպատականը և այլ կուսակալություններ։ Այս անգամ Յուսուֆը Դվին ուղարկեց Նասր ալ-Սուբուքիին։ Սա վերսկսեց Յուսուֆի հին քաղաքականությունը Աշոտ Բ-ի դեմ։ Նասր ալ-Սուբուքիին պետք չէ նույնացնել Սուբուքի հետ, որն ինչպես տեսանք, Ատրպատականի կառավարիչն էր Յուսուֆի բանտարկության ժամանակ։

Հենց որ հասնում է Նախճավան՝ Նասրը, իրեն դիմավորող Սյունյաց իշխաններին ձերբակալում է և բանտարկում։ Դվին գալուց հետո նա արշավանքներ կազմակերպեց դեպի Այրիվանք և ապա կաթողիկոսի ամառանոցը՝ Բյուրական։ Նրա ժամանակ է, որ Հովհաննես կաթողիկոսը լքում է Դվինի հայրապետանոցը և թափառական կյանք վարում։ Դրանից հետո այլևս ոչ մի հայ կաթողիկոս Դվինում չնստեց։ Արդեն 893 թ. երկրաշարժի ժամանակ կործանվել էին թե հայրապետանոցը, թե ս. Գրիգոր մայր եկեղեցին։ Հայրապետական աթոռի տեղափոխմամբ օտար տարրի դիրքերը ամրապնդվում էին Դվինում։

924 թ. Յուսուֆը հետ է կանչում Նասիրին մի ապստամբություն ճնշելու համար։ Նասրն իրեն փոխանորդ է թողնում Բշիրին։ Վերջինս շարունակում է նույն թշնամական քաղաքականությունը, բայց պարտություն է կրում Գևորգ իշխանից և Աշոտ Բ-ից։ Նորից է գալիս Նասրը և այստեղ իր պատմությունը վերջացնում է Հովհաննես կաթողիկոսը։ Իբն ալ-Ասիրը հիշում է, որ 927/28 թվականներին տեղի ունեցավ Կայսրության կողմից մի նոր արշավանք Դվինի վրա, երբ այնտեղ կար, ասում է նա, Նասր ալ-Սուբուքին։ Երկար պայքարից հետո, որի ընթացքում գործածվում են ռազմական մեքենաներ՝ բարաններ և հրարձակ մեքենաներ, հույները պարտվում են և նրանցից 10 հազար մարդ է սպանվում։ Մինորսկին սխալմամբ միացնում է թե՛ երկու անձնավորություններին և թե՛ երկու հարձակումները Դվինի վրա։ Բայց Ն. Ադոնցը հստակ կերպով տարբերում է ինչպես Սուբուքիին և Նասր ալ-Սուբուքիին, այնպես էլ երկու հարձակումներն իրարից։

Սաջյանների շրջանը Դվինում և նրանց տիրապետությունը Արաքսի հովտի Գողթն — Նախճավան—Դվին հատվածում սկիզբ դրեց այս դավառների հետագա ապահայացման։ Հայաստանի քաղաքական ապահովության և միասնական թագավորություն ստեղծելու համար անհրաժեշտ էր ոչնչացնել այդ ամիրայությունները և այս բանին ձգտեցին գրեթե բոլոր Բագրատունի թագա-

[1] Հովհաննէս, էջ 401։
Տես N. Adontz, Asot Erkat ou le Fer, Annuaire, de l'Inst. de Phil. et d'Hist. Orientale, III, Bruxelles 1935.
[2] Ibn al-Athir, v. VIII, էջ 129։
[3] V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, էջ 119—120։
[4] N. Adontz, Նույն տեղում։

վորները։ Բայց դժբախտաբար չհաջողվեց վերջնականապես ոչնչացնել նրանց նույնիսկ Գագիկ Ա-ի ժամանակ, ինչպես հետո կտեսնենք։

Սաջյանների ժամանակ Դվինում կտրվում էին դրամներ թե՛ խալիֆաների, թե՛ Սաջյանների անուններով[1]։ Այսպիսի դրամներ էին կտրվում նաև Պարտավում (Բարդաա)։

3. ԽԱՌՆԱԿ ՇՐՋԱՆ (929—941)

Այս շրջանը խառն է թե Ատրպատականում, թե Դվինում։ Հայաստանում այդ ժամանակ իշխում էր Աբասը (928—953), որը Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի խռովահույզ շրջանից հետո իշխեց համեմատաբար խաղաղ։ Բայց նա չունեցավ պետք եղած ուժը, առիթից օգտվելու և գրավելու Արաքսի հովտի այս կարևոր հատվածը, որը գտնվում էր օտարների ձեռքում։

929—937 թթ. Ատրպատականում իշխում էր Յուսուֆի ստորադրյալներից Մուֆլիհը։ Թովման նրան և նրա հաջորդներին արհամարհարար անվանում է «որդիք աղախնեաց և ծառայից տանն Ասպուսաձայ»[2]։

Իբն ալ-Ասիրը վկայում է, որ 317 հիջրի թ. (929/30) Մուֆլիհը բախվեց Դոմեստիկի հետ և հաղթեց նրան։ Որտե՞ղ կարող էր տեղի ունենալ այդ բախումն Ատրպատականի ամիրայի և Հովհան Կուրկուասի միջև, երբ երկուսի մեջտեղում գտնվում էր Հայաստանը։ Իբն ալ-Ասիրը հիշում է նաև մի այլ բախում, որը տեղի է ունեցել 319 հ. (931) թ.։ Ըստ նրան. Գագիկ Արծրունու դրդմամբ, բյուզանդական զորքերը հարձակվում են Խլաթ, Բերկրի և այլ քաղաքների վրա և կոտորում մահմեդականներին[3]։ Այս լուրն առնելով Մուֆլիհը հարձակվում է Վասպուրականի վրա։ Ուստի, Մուֆլիհի նախկին արշավանքը նույնպես կարող էր կատարված լինել միայն Վասպուրականի վրայով, և այն էլ հենակետ ունենալով Գողթն—Նախճավան—Դվին հատվածը։

Շփոթություն է ստեղծում Թովման, մոտավորապես 937 թ. Դվինի վրա հարձակված ամիրայի անունը չհիշատակելով։ Իհարկե դա Ատրպատականի՝ այդ ժամանակ իրար հաջորդող ամիրաներից մեկն էր, բայց Թովման նրա անունը չի տալիս, որովհետև նա արդեն նախապես (էջ 473) ասել էր, թե նկատի ունենալով, որ հիշատակության արժանի գործ չեն կատարել, ուստի նրանց անունները ինքը չի հիշելու։

Իբն Միսքաուայհը հիշում է Ատրպատականի համար պայքարող ամիրաներից Ալ-Լաշքարիի մի ասպատակությունը Վասպուրականի վրա (937/938), որն այդ ժամանակ փախչում էր Դայսամ իբն Իբրահիմից (ալ-Քուրդի)։ Նրան սպանեց Անձևացյաց Ատոմը (որդի Գուրգենի)[6]։ Չգիտենք արդյոք նա մտավ Արաքսից այս կողմ Գողթն—Նախճավան—Դվին հատվածը թե չէ՞։

Դայսամն Ատրպատականում իշխեց (առաջին անգամ) 937—41 թթ.։ Այս շրջանում Դվինը հավանաբար նրա իշխանության տակ է գտնվում։ Լենինդրա-

---

[1] Р. Фасмер. О монетах Саджидов. Изв. Общ. обс. и изуч. Аз., Баку, 1927, № 5.
[2] Թովմայ. էջ 473։
[3] Ibn al-Athir, v. VIII, էջ 159։
[4] Ibn al-Athir, v. VIII, էջ 173։
[5] Թովմայ. էջ 487—90։
[6] Ibn Miskawaih. (Amedroz H. F. and Margoliouth D. The Eclipse of the Abbasid Caliphate գրքում, Oxford, 1920), p. I, էջ 401—403։

դի էրմիտաժում կա մի դրամ, 330 հ. (941/42) Արմինիա վերտառությամբ, որն ըստ դրամագետ Ա. Բիկովի, Դվինում է կտրված[1]։ Դրամի վրա կա խալիֆայի անունը՝ Ալ-Մուտտակի և նրա անունը՝ Դայսամ իբն Իբրահիմ։

4. ՍԱԼԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՎԻՆՈՒՄ (941/2—987) (ԸՆԴՄԻՋՈՒՄՆԵՐՈՎ)

Ա—941/2—948

Սալարյան Մարզուբան իբն Մուհամմադ իբն Մուսաֆիրը (941—957), հաղթելով Դայսամին, տիրացավ ամբողջ Ատրպատականին և Արաքսից այս կողմ գտնվող Անդրկովկասի երկու մեծ քաղաքներին, որոնք էին Պարտավը և Դվինը[2]։ Սակայն 948 թ. կռվի բռնվելով Բույի (կամ Բուեյհի) տիրակալներից Ռուքն ադ-Դինի հետ դերի ընկավ և մնաց բանտում 948—954 թթ.։

Բ—948—951 թթ.

Մարզուբանի գերի ընկնելով Ատրպատականին տիրացավ Բույի զորավարներից Մուհամմադ իբն Աբդ ադ-Ռազզակը։ Այդ ժամանակ Մարզուբանի եղբայրը՝ Վահսուդանը ազատ արձակեց Դայսամին, որը բանտարկված էր (937—948)։ Դայսամն իր շուրջը հավաքեց քրդերին և դայլամիներին և սկսեց ուժեղ պայքար մղել Ատրպատականին տիրանալու համար։ Իբն Միսքաուայհը հիշում է, որ Մարզուբանի բանտարկվելուց հետո Դվինը և Նախճավանը գրավել էին ալ-Ֆադլ իբն Ջաֆար ալ-Համդանին և Իբրահիմ իբն ալ-Դարբին[3]։ Վերջինս Մարզուբանին մոտիկ անձնավորություն էր և Դայսամին թշնամի։ Սակայն Դայսամը վերադրավում է Մարզուբանի բոլոր հողերը, ինչպես նաև Նախճավանը և Դվինը ու բանտարկում Իբրահիմ իբն ադ-Դարբին։

Գ—951—954 թթ.

Դայսամի երկրորդ իշխանությունը ուժեղ չի լինում, որովհետև նրա դեմ պայքար են սկսում զանազան թշնամիներ Ատրպատականում։ Իսկ Դվինում այդ ժամանակ հայտնվում է մի նոր տիրակալ։ Դա Մուհամմադ իբն Շադդադն է, առաջին Շադդադյանը։ Նա 951 թ. դրավեց քաղաքն առանց դիմադրության։

Սալարյանները նրա դեմ խիստ պայքար են սկսում։ Իբրահիմ իբն Մարզուբանը գրգռում է Դերմուսի տիրոջը, ապա ինքն է զորք ուղարկում, բայց իզուր։ 953 թ. Աշոտ Գ-ն կամենալով օգտվել այս վիճակից, հարձակվում է, բայց նա էլ չի կարողանում գրավել քաղաքը։

---

[1] *А. Быков*, Дайсам ибн Ибрахим ал-Курди и его монеты Эпиграфика Востока, X, 1955.

[2] *Սալարյանների շրջանի մասին տե՛ս* Ա. Տեր-Ղևոնդյան, *Դվինը Սալարյանների ժամանակ ԳԱ Տեղեկագիր. 1956, № 12։*

[3] Իբն Միսքաուայհ. *Նույն տեղում*, p. II, էջ 129։

Դ—954—957 թթ.

954 թ. Մարզուբանն իր մոր և բանտից նոր փախած Իբրահիմ իբն ադ-Դարբիի օգնությամբ փախչում է բանտից։ Նա զորք է ուղարկում և գրավում է Դվինը[1]։

Ինչպե՞ս էին Սալարյանները Դվինը կառավարում։ Պարտավի մասին Իբն ալ-Ասիրը հիշում է, որ 944 թ., երբ ռուսներն ասպատակեցին Կուրի հովիտը և հարձակվեցին Պարտավի վրա, նրանց դիմադրեց Մարզուբանի փոխանորդը, այսինքն նրա կողմից նշանակված կառավարիչը։ Գուցե Դվինում էլ նստում էր մի այսպիսի կառավարիչ։ Մի բան պարզ է, որ Դվինում Ժ. դարում երբ անընդհատ իրար էին հաջորդում տիրակալները, ստեղծվել էր մի վիճակ, երբ անիշխանության դեպքում քաղաքը կառավարում էր մեծամեծներից կազմված մի ավագանի, որը ձգտում էր ապահովել առևտրական այս կարևոր կենտրոնի անվտանգությունը։ Քաղաքի մեծամեծների մեջ մեծ դեր պետք էր խաղացած լիներ մահմեդական տարրը, որի վրա էլ հենվում էին օտար նվաճողները։

Ժ դարում Դվինում մահմեդականների թիվն այնքան շատ է եղել, որ մատենագիրները նույնիսկ հիշում են այն կրոնական հոսանքները, որոնց պատկանել են նրանք[2]։

Դվինի, Նախճավանի և Գողթնի մահմեդական բնակչությունը եղել է հիմնականում արաբ և իրանական տարրերից (դայլամի, քուրդ և այլն)։ Իբն Հաուկալը հիշում է, որ Հայաստանում և Ատրպատականում պարսկերեն և արաբերեն էին խոսում[3]։

Դվինում դեռ մինչև հիմա մզկիթի հետք չի հայտնաբերված։ Կարծվում է, որ կաթողիկոսարանը 893 թ. երկրաշարժից հետո վերածված է եղել մզկիթի[4]։

Ե—957—966 թթ. (մոտավորապես)

957 թ. մեռավ Ատրպատականի ամիրա Սալար Մարզուբանը և Ատրպատականն ընկավ խառնակ վիճակի մեջ։ Այս շրջանի մասին դժվար է ասել մի վերջնական խոսք, որովհետև չկան հստակ տեղեկություններ։ Մինորսկին[5] կարծում է, որ Դվինը այս շրջանում շարունակել է մնալ Սալարյանների իշխանության տակ, որովհետև ըստ նրան այնտեղ հաճախ գտնվել է Իբրահիմ իբն Մարզուբանը։ Սակայն այս հարցում նրա միակ աղբյուրի՝ ԺԱ դարի արաբ պատմագիր իբն Միսքաուայհի փաստերը մեզ չեն համոզում, թե Իբրահիմը հենց Դվինում է եղել։ Պատմագիրը հաճախ ասում է, որ Իբրահիմը Ատրպատականից գնաց Արմինիա։ Ժ դարում արաբ պատմագիրների համար Արմինիան նշանակում է ընդհանրապես արաբական նախկին Արմինիա կուսակալության որևէ մի մասը, բայց մասնավորապես երկու բան՝ Բագրատունյաց թագավորությունը և կամ՝ Արծրունյացը։ Այս վերջինիս համար իբն Միսքաուայհը ոչ մի անգամ չի օգտագործում Վասպուրական բառը, այլ միշտ

---

[1] Մունաջջիմ Բաշու այս հատվածի թարգմանությունը տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Նույն տեղում, էջ 82-83։

[2] Ալ. Մուկադդասի. Bibl. Geogr. Arab., p. III, էջ 378։

[3] Իբն. Հաուկալ. Bibl. Geogr. Arab., p. II, էջ 250։

[4] Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 120—122։

[5] *V. Minorsky*, Enc. oi Isl., Musafirids.

ասում է Արմինիա, իսկ Դվինի համար նրա մոտ կա Դաբիլ բառը։ Որպեսզի համոզվենք, թե Արմինիա ասելով պատմագիրը հասկանում է Վասպուրական և ոչ թե Դվին, վերցնենք հետևյալ հատվածը. «Եվ Իբրահիմը փախավ Արմինիա, իսկ Ջուստան իբն Շարամզանը նրանից մոտիկ էր գտնվում և տիրացավ նրա զորքի ճամբարին, գրավեց Մարաղան և կցեց Ուրմիային»[1]։ Պարզ է, որ այստեղ Արմինիան որպես Դվին հասկանալու ոչ մի հիմք չկա, ինչպես անում է Մինորսկին։ Այս նույնը կարելի է ասել նաև մյուս դեպքերի մասին, երբ հեղինակն օգտագործում է Արմինիա բառը։

Այսպիսով, եթե Դվինը այդ ժամանակ չէր գտնվել Իբրահիմի ձեռքում, ապա ո՞վ էր այնտեղ իշխում։

Մեզ հայտնի է Աշոտ Գ-ի՝ Դվինը գրավելու մի փորձը 953 թ. երբ Մարզուբանը գտնվում էր բանտում։ Հավանական է ենթադրել, որ Աշոտ Գ-ն այս փորձից հետո 957—966 թթ. դարձյալ կարող էր փորձած լինել գրավել Արաքսի հովտի այս կարևոր հատվածը, որի մեջ մտնում էր Դվինը։ Նա կարող էր բավարարված լինել միայն այս բոլորի վրա ընդհանուր գերիշխանությամբ, չջնջելով Դվինում հաստատված մահմեդականների իշխանությունը։ Դժբախտաբար հայ պատմագիրները բոլորովին չեն խոսում այդպիսի մի արշավանքի մասին, ուստի այս շրջանի մասին վերջնական խոսքը դարձյալ կարոտ է նոր փաստերի։

9—966 (մոտավորապես)—982 թթ.

966 թ. Իբրահիմ իբն Մարզուբանը, հաղթելով իր հակառակորդներին, Ատրպատականին տիրացավ։ Նա մեռավ 983 թ.։ Սակայն 976 թ. սկսում է նրա իշխանության թուլացման շրջանը։ Հավանական է, որ նրա իշխանությունը թուլանում է նաև Արաքսի հովտի Գողթն—Նախճավան—Դվին հատվածում էլ։ Ասողիկը, երբ հիշում է 982 թ. սկսած դեպքերի շարքը, Դվինի մասին խոսում է որպես Սալարյան կալված։ Երբ այդ դեպքերը սկսում են, Գողթնի ամիրան՝ Աբու Դուլաֆը (Ապու Տլուֆ) հանդես է գալիս այնքան ուժեղ, որ նա վախ է ազդում թե՛ Ատրպատականի ամիրային, թե՛ հայոց Սմբատ Բ-ին։ Հավանական է, որ նա այս շրջանում արդեն իր ազդեցությունը տարածած լիներ նաև Դվինի վրա։

Կեկավմենոսի հատվածը

Բյուզանդագետ Վասիլևսկին իր մի հոդվածում[2] խոսում է բյուզանդական մի ձեռագրի մասին, որի հեղինակն է ԺԱ դարի մի պատմագիր։ Վերջինս, ըստ Վասիլևսկու, Դվինի մասին հետաքրքրական փաստեր է հաղորդում։ Նրա պապը՝ Կեկավմենոսը Հայաստանի իշխաններից է և Դվինի շրջանի իշխան։ Դաշնակցելով մի այլ իշխանի հետ, նա խարեությամբ փորձում է գրավել Դվինը մի ուրիշից և իսկապես նրան հաջողվում է այս բանը։ Պատմագիրն այն համարում է թշնամական գործողություն Կայսրության նկատմամբ։ Վա-

[1] Իբն Միսքաուայհ. Նույն տեղում, P. II, էջ 181։

[2] *В. Васильевский*, Советы и рассказы византийского боярина XI в., Журн. Мин. Нар. Прос. 1881.

սիլևսկին Դվինի պատմության մասին երկար մտորումներից հետո գալիս է այն եզրակացության, որ այն անձը, որի հետ դաշնակցում է Կեկավմենոսը, ըստ Սալարյան Աբուլ-Հայջա իբն Իբրահիմն է, որը 982 թ. գրավում է Դվինը և մտնում Սմբատ Բ-ի թագավորությունը։ Բայց այստեղ կասկածելի է, որ խնդրո առարկա քաղաքը հենց Դվինն է, որովհետև հեղինակն այն նկարագրում է հետևյալ կերպ. Ամրոցը գտնվում է մի բարձր վայրում, ունենալով իր վերևում ընդարձակ մի հարթավայր, որտեղ բերդի բնակիչները հնարավորություն ունեն ցորեն ցանելու և արածացնելու արջառը։ Նա ամեն կողմից շրջապատված է ժայռերով և խոր-խորատներով, այնպես որ նրան մերձենալու համար կա միայն մի նեղ ճանապարհ... և այլն։ Դվինին ծանոթ ամեն ոք կարող է պարզ կերպով ասել, որ այս լեռնային ամրոցը երբեք չէր կարող լինել ընդարձակ Դվին քաղաքը, որը գտնվում է հարթավայրում։

Հեղինակն ասում է, որ Վասիլ Բ-ի իշխանության սկզբում (Ժ դարի 80-ական թթ.), երբ նա սկսեց պայքարել բուլղարների դեմ, այս Կեկավմենոսը Հելլադա նահանգում բարձր պաշտոն ուներ, իսկ վերոհիշյալ դեպքերը տեղի էին ունեցել դրանից առաջ մոտավորապես 70-ական թվականներին։ Հավանական է, որ այս ամրոցը գտնվի Արևմտյան Հայաստանի այն մասում, որտեղ կային Բյուզանդիային ենթակա մահմեդական ամիրայություններ։

է—982—987 թթ.

Այս հինգ տարվա դեպքերը հստակ կերպով շարադրված են Ասողիկի մոտ[1]։ Ատրպատականում մի սալարյան ամիրա Սմբատ Բ-ի եղբոր Կարսի Մուշեղի դրդումով հարձակվում է Հայաստանի վրա, բայց կռվի բռնվելով պարտվում է Աբու Դուլաֆից, որը գրավում է «զԴուին և զամենայն քաղաքս նորա»։ Սա վերջին սալարյանն էր, որ իշխեց Դվինին։

Գողթնի Աբու Դուլաֆը երկար չիշխեց այստեղ, որովհետև 987 թ. հարձակվեց Ռավվադյան Աբուլ-Հայջան և դրավեց քաղաքը։

5. ՌԱՎԱԴՅԱՆՆԵՐԻ ԿԱՐՃԱՏԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ (987—988/89)

Քրդական ծագմամբ այս իշխանական տունը չկարողացավ սաջյանների և սալարյանների (մուսաֆիրների) նման իր գերիշխանության ենթարկել Արաքսից այս կողմում Առանը և կամ հարկատու դարձնել հայկական փոքր թագավորությունները։ Միայն Աբուլ-Հայջան է, որ գրավեց Դվինը և Սմբատ Բ-ից հարկ վերցրեց[2]։ Նա մեռավ 988/9 թ.[3] և այսպիսով վերջացավ Ռավադյանների հզորության շրջանը։

Սրանով վերջանում է Ժ դարում Ատրպատականի ամիրաների ժամանակավոր տիրապետության շրջանը Արաքսի հովտի Գողթն—Նախճավան—Դվին հատվածի վրա։ Արաբ աշխարհագիրների և պատմագիրների մոտ այս հատվածը միշտ էլ համարվում է Հայաստանի մի մասը։ Դժբախտաբար օտար

[1] Ասողիկ, էջ 188—200։
[2] Նույն տեղում, էջ 198—199։
[3] Շերեֆլի, Ռավադյանների պետության մասին (ադրբ.), Труды Ин-та ист. АН АзССР, XI.

տիրապետության այս շրջանն օգնեց հետագայում օտար տարրի ներխուժմանը։

Հենց որ մահացավ Աբուլ-Հայջան, Գողթնի ամիրա Աբու-Դուլաֆը վերագրավեց Դվինը։ Այս մասին Ասողիկը, դժբախտաբար, այլ տեղեկություններ չի տալիս։

6. ԳԱԳԻԿ Ա-Ի ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գագիկ Ա-ի ժամանակ (990—1020) Բագրատունյաց թագավորությունն ապրեց իր վերջին փայլուն շրջանը։ Գագիկն իր իշխանությանը ենթարկեց Հյուսիսային Հայաստանի ինքնագլուխ դարձած բոլոր իշխաններին։ Հայ ժողովրդի պատմության ատլասի[1] մեջ ցույց է տրված հայոց թագավորության սահմանները հենց Գագիկ Ա-ի ժամանակ։

Հստակ կերպով ոչինչ ասված չէ պատմագիրների մոտ, բայց պարզ է, որ Գագիկն իրեն ենթարկեց նաև Գողթնի Նախճավանի ամիրային, գուցե և նրա ձեռքից առնելով Դվինը։ Լաստիվերտցին հիշում է Դավիթ Դվնացի անվամբ մի հզոր իշխանի, որին Անիի մեծամեծները հայոց գահն են առաջարկում, այն ժամանակ, երբ Գագիկ Բ-ն ընկել էր բյուզանդացիների ծուղակը։ Նա ավելացնում է, որ Դավթի քույրը Գագիկի կինն էր[2]։ Ո՞վ էր այս Դավիթը։ Նրա անունը հիշում է նաև Ներսես Շնորհալին իր «Հաւաքածոյ ոտանաւոր պատմականաց» աշխատության մեջ, որտեղ Բագրատունյաց թագավորների ցուցակի վերջում Գագիկ Բ-ից հետո ավելացնում է նաև այս Դավիթին[3]։ Գուցե Դավիթը Գագիկ Ա-ի ժամանակ Դվինի իշխանը եղած լիներ։

Մի բան պարզ է, որ Բագրատունի բոլոր այն թագավորները, որոնք իրենց ենթարկեցին Դվինը (Աշոտ Ա, Սմբատ Ա, Աշոտ Բ, Աշոտ Գ, Գագիկ Ա), չոչընչացրին Դվինի մահմեդականների տեղական իշխանությունը։ Ահա այս է պատճառը, որ քաղաքն առանց դիմադրության ընկնում էր օտար ամիրաների ձեռքը։

Դվինի համար մղված պայքարն ավանդական ձևով իր արտացոլումն է գտել հայ մատենագրության մեջ։ Ըստ այս ավանդության, Մովսես Խորենացին մարգարեանում է, թե Բագրատունիները պետք է տիրեն Դվինին[4]։

Դժբախտաբար Բագրատունիների անզորությունը Դվինում և Ոստան դավառում հնարավորություն չտվեց նրանց մշտական գերիշխանություն ձեռք բերելու նաև Վասպուրականի, Սյունիքի, Խաչենի և այլ նահանգների վրա։

Վրաց Բագրատունիները ձգտելով վրաց հողերի միավորմանը, երկարատև պայքար մղեցին Թիֆլիսի ամիրայության դեմ, բայց այդ պայքարը մղվում էր այլ պայմաններում, որովհետև այս ամիրայությունը կտրված էր մահմեդական աշխարհից, ուստի և նրա ջախջախումն ավելի հեշտ էր։

---

[1] Ա. Երեմյան. *Ատլաս*, Երևան, 1952։
[2] Լաստիվերտցի. *Պատմութիւն*, 1912, Թիֆլիս, էջ 61։
[3] Տաշեան. *Ցուցակ հայերէն ձեռագրաց*, Վիեննա, 1895, էջ 482։
[4] Մ. Խորենացւոյ. *Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1865, էջ 284։
Մ. Այրիվանեցի. *Պատմութիւն*, Մոսկվա, 1860, էջ 56։
Ալիշան. *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 411։

ՇԱԴԴԱԴՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Դագիկ Ա-ի մահվամբ (1020) վերջացավ Բագրատունյաց հզորության շրջանը։ Քանի դեռ ողջ էր Դագիկը, Գանձակի Շադդադյան ամիրա Ֆադլ Ա-ը (985—1031) կարողացավ միայն Փառիսոսի թագավորությունը կիսել Դագիկի հետ։ Դագիկի մահվանից հետո, սակայն նա սկսեց իր ծավալողական քաղաքականությունը։ Մինորսկին, հենվելով Մունաջջիմ Բաշու տվյալների վրա, Գանձակի Շադդադյանների կողմից Դվինի գրավման թվականը դնում է 1022 թ.[1]։ Նույն մատենագիրը հիշում է նաև, որ 1027 թ. Ֆադլը կառուցեց մի կամուրջ Արաքսի վրա[2]։

1021 թ. տեղի ունեցավ մի արշավանք, որը վերջնականապես խախտեց Հայոց դիրքերը Դվինում։ Դա դելմիկների (Մերձկասպյան դայլամիների) արշավանքն էր[3], որը Վարդանի մոտ վերագրվում է սելջուկ Թուրքերին[4]։

Դագիկ Ա-ի մահվամբ արդեն հաշվեն, Սյունիք, Գուգարք և այլն ինքնաբերաբար բաժանվել էին Անիի թագավորությունից։ Դա երևում է նրանից, որ երբ Կայսրությունը որպես «ժառանգություն» վերցրեց Հովհաննես Սմբատի թագավորությունը՝ վերոհիշյալ նահանգների վրա հավակնություն չունեցավ։ Սրանով էլ հեշտացավ նաև Դվինի բաժանումը Անիի թագավորությունից։

ԺԱ դարի 20-ական թվականներին Նախճավանում իշխում է մի ամիրա, որն ըստ Երևույթին ժառանգորդն էր Ժ դարում գոյություն ունեցող Գողթնի ամիրայության։ Նրա մասին խոսում է ներբողագիր բանաստեղծ Կաթրանը[5] իր ոտանավորների մեջ։ Դա Աբու Դուլաֆն է, որի անունը մեզ հիշեցնում է Ժ դարի Գողթնի նշանավոր նույնանուն ամիրային։ Նրա մոտ Նախճավանում 20-ական թվականներին հյուր է եղել Կաթրանը և ներբողել է նրան։

Այսպիսով, այս ժամանակ Արաքսի հովտի Գողթն—Նախճավան—Դվին հատվածը դարձյալ կտրվում է Հայոց թագավորությունից։ Հավանական չէ այն կարծիքը[6], թե Դագիկ Ա-ի մահվանից հետո Հովհաննես Սմբատի և Աշոտի միջև իշխանությունը կիսելու ժամանակ Դվինն ընկավ Աշոտի բաժնի մեջ։ Լաստիվերտցին լոկ ասում է, թե Աշոտին տրվեց «զներքին կողմն աշխարհին, որ հայի ի վերայ Պարսից և վրաց»[7]։ Եթե Աշոտն իսկապես Դվինն ստացած լիներ, նրա նման ուժեղ իշխանի ձեռքից Շադդադյան և Աբուլ-Ասուարը հազիվ թե կարողանար խլել Դվինը։ Հավանական է, որ քաղաքի անցումը Շադդադյաններին կատարվել է լուռ կերպով։ Երկու եղբայրների միջև վեճի ժամանակ Աբուլ-Ասուարն արդեն քաղաքի տերն էր։ Այսպես, գիտենք, որ Ասլիրատ իշխանը, որը կապեր ուներ Աշոտի հետ, փախչելով Հովհաննես Սմբատի մոտից, 12 հազար զորքով գալիս է Դվին։ Աբուլ—Ասուարը սկզբում մեծարում է նրան, յայց հետո վախենալով նրա ուժից, սպանում է Ասլիրատին։ Չգիտենք, Աբուլ-

---

[1] V. Minorsky, Նույն տեղում, էջ 22։

[2] Նույն տեղում, արաբ. բնագիր, էջ 11։

[3] Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների ժամանակ, Երևան, 1922, էջ 28։

[4] Վարդան, Պատմութիւն, Մոսկվա, 1861, էջ 131։

[5] Տե՛ս Хаким Катран Табризи, Тавриз, 1947, էջ 11։
Е. Бертельс, Низами, Москва, 1956, էջ 40։

[6] Ас. Шахназарян, Двин, Ереван, 1940, էջ 126։

[7] Լաստիվերտցի, էջ 9։

Ասուարի կասկածը Ապիրատի նկատմամբ իրական հիմք ունե՞ր, թե չէ։ Գուցէ Ապիրատը իսկապես երազեր գրավել Դվինը։

Շադդադյանների իշխանությունը Դվինում մի նոր շրջան է, երբ այլևս չկային հայ Բագրատունիները և ոչ էլ Ատրպատականի նախկին ամիրաները, որպեսզի պայքար մղեին Դվինը գրավելու համար։ Սա առաջին իսկական ամիրայությունն է Դվինում, այսինքն մի ժառանգական իշխանություն, որտեղ տիրում էին հենց քաղաքում հաստատված ամիրաները (Աբուլ-Ասուար, Աբու Նասր և այլն)։

Այս նոր շրջանի պատմությունն[1] արդեն կապված չէ ո՛չ խալիֆայության, ո՛չ էլ Բագրատունիների հետ, այլ մտնում է բյուզանդական, սելջուկյան և հետսելջուկյան շրջանների պատմության մեջ։

---

[1] ԺԱ—ԺԳ դարերի Դվինի պատմության մասին տե՛ս V. Minorsky, նույն տեղում, էջ 40—67, 123—124։